



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-25-37, orient@ysu.am, www.yasu.am

Արձանագրություն

Արևելագիտության ֆակուլտետի խորհրդի 2011 թ. փետրվարի 7-ի թիվ 2 նիստի

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 18-ը:

Օրակարգում

1. Արևելագիտության ֆակուլտետի կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման գործող կարգերում և ծրագրերի կառուցվածքում (բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրեր) անհրաժեշտ փոփոխություններ կատարելու հարցը
2. Հայցորդների և ասպիրանտների թեմաների հաստատման և ղեկավարների նշանակման հարցը
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ –

1. Արևելագիտության ֆակուլտետի կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման գործող կարգերում և ծրագրերի կառուցվածքում (բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրեր) անհրաժեշտ փոփոխություններ կատարելու հարցը:
2. Իրանագիտության ամբիոնի ասպիրանտ Բեհրուզ Ռուդբարաքի Քելարիի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավար նշանակելու հարցը
3. Արաբագիտության ամբիոնի ասպիրանտ Թառլոյան Արուսյակի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավար նշանակելու հարցը

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Յ Ի Ն – Արևելագիտության ֆակուլտետի դեկան Բ.Գ.Թ. պրոֆ. Գ. Մելիքյանը, արաբագիտության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ. պրոֆ. Գ. Մաստրյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ. պրոֆ. Գ. Ասատրյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ պ.գ.թ. դոց. Ալ. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի Բ.Գ.Թ., դոցենտ Ս. Կարաբեկյանը և իրանագիտության ամբիոնի ասիստենտ, Բ.Գ.Թ. Թ. Չարչյանը:

Ո Ր Ո Շ Ե Յ Ի Ն –

1. ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությանը ներկայացնել հետևյալ առաջարկությունները.
 - a. բակալավրիատի համակարգում գնահատել ոչ թե ներկայությունը, այլ մասնակցությունը և հնարավորություն տալ դասախոսին անձամբ որոշել 4 միավորի սահմանումը՝ պահպանելով նախքան քննության հատվածի 12 միավորը,
 - b. մագիստրատուրայում և բակալավրիատում միջանկյալ քննությունների ժամկետների տեսանկյունից ավելի ճկում համակարգ սահմանել, ինչպես նաև հնարավորություն ընձեռել թեստերը առանց քննական տեսրերի անցկացնել,
 - c. մագիստրատուրայում միջանկյալ քննությունը ընդունել տպագրված ռեֆերատների տեսքով,
 - d. բարձրացնել ՄՈԳ-ի շեմը՝ դարձնելով 10 միավոր,
 - e. երրորդ կիսամյակում ներդնել “Ակադեմիական գրագրություն” դասընթացը
 - f. մագիստրատուրայի ուսանողների համար ներդնել “Մասնագիտության դասավանդման մեթոդաբանությունը” դասընթացը
 - g. ավելացնել միջանկյալ քննությունների ամփոփմանը հատկացված ժամանակահատվածը՝ դարձնելով 10 օր:
2. Հաստատել իրանագիտության ամբիոնի ասպիրանտ Բեհրուզ Ռուդբարաքի Քելարիի ,Գալեշների ժողովրդական հավատալիքները թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել պ.գ.թ., դոցենտ Վ. Ա. Առաքելովային

3. Հաստատել արաբագիտության ամբիոնի ասպիրանտ Թառլոյան Արուսյակի «Արաբերեն և եբրայերեն փոխներգործությունը ժամանակակից պաղեստինյան և իսրայելական գրականության մեջ» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., դոցենտ Ս.Բ. Կարաբեկյանին

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ